

Մ. Յ. ԲԱՐԱՅԵԱՆ

ԹԵՐԹԻԿՆԵՐ

ԻՄ ԱՆՍՏՐՈՂԱՆԴՈՒՄԻՑ

1919

Նոր-Նախիջևան

Տպարան Ս. ԱՆՍԻՆԱՆԻ

ՀԵՐԱԲԵՐՈՑ Բ. ԱՋԵՏԵԱՆ Ի ՔԻ

Ա. Յ. ԲԱՐՍԵՅԱՆ

(A. B. John.)

5439 թ. 4.

Թ Ե Ր Թ Ի Կ Ն Ե Ր

Ի Մ Մ Ե Մ Օ Ր Ա Ն Դ Ո Ւ Մ Ի Ց



Նոր-Նախիջևան
Տպարան Ա. ԱԻՍԳԵՅԱՆԻ

1919

Нахичевань н-Д.
Тип. С. Я. АВАКОВА



Հ Ա Յ Ր Ե Ն Ի Օ Ձ Ա Պ

Ինտատի կեանքի՝ արիւնով անթիւ, նոր ծնւած աշխարհ,
Դարերի՝ քնից Յարութիւն տաւ Հայաստան իմ մայր,
Չըմանց բաց տեղ, Չահէլ Չիւանի արիւնով տաւտ,
Չը լինի ներկւած, թշնամու ճանգէն, քո էն ծոցն ազատ:

էն թարմ, սե հողումդ, արիւններ անթիւ, գետեր են կազմած,
Եւ այդ թարմ կեանքով ով իմ մայր երկիր, նոր հոգի տաւ.
Ընդունում ազատ զգւանքովդ ուրախ լայն կուրծքդ բացած,
Մտացւած վաղուց բեկորներն էն հին պապերի թողած:

Պաշտելի՛ վաթան, իմ սիրտն օջախ՝ փառքդ շատ փեմ,
Աշխարհումն ամբողջ, մարդկութեան առաջ, այսօր կը տեծնեմ,
Հերոսներն քո էն պիտ ազրեն մեր մէջ դարեր շատ երկար,
Մենք նրանց առաջ խօնարեւում սրտանց իզէալի համար:



Ի Մ Ա Զ Փ

Սև վեց դարեան սոսկումներով, դուն մեծացար ով իմ ազգ,
Բռնութիւն դէմ կուրծքդ տւած մարտնչումես մեն մենակ,
Քեզ հետ ապրող ազգերն անգամ իրանց խօսքը դրժեցին,
Պատերազմի էն վառ դաշտում թշնամու ճանգն թողեցին:

Վառ սկզբունք ազատութեան դուն բունեցիր քո շաւիղ,
Միշտ հնչեցրին քո ահանջին մահւան գունգն սև տանիղ,
Գոռ թշնամին երկաթ կամբդ անկարող էր խորտակել,
Ինչն դիմացար անցած գլխովդ մեծ դարերին անվայել:

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

Հայրենի երկիր՝ էլ սիրուն վաթան,
Քո ջրին մատաղ, քո հողին դուրբան.
Գալինս ենք, գալինս խմբերով շարան,
Օջախն մեր սուրբ հայրերի արեան:

Քարու քանդ եղած աւերակ վաթան,
Հարազատ որդիքդ թարմ ոյժով կըզան.
Հայրերի թողած մոխրակոյան էն հին,
Հիմբերով հաստատ պիտ ամուր շինեն:

Դ Է Պ Ի Հ Ա Յ Բ Ե Ն Ի Ք

Էլ գութ լեռների, խմբ-խմբ ձորերի,
Մաշող շղթաններն անբախտ բեկորների.

Կանչում է, կանչում՝ ձայնը վաթանի,
Անտէր մնացած Ձեզ էլ թշւառների:

Մեր սուրբ պապերի՝ արցունքն արիւնով,
Սմբողջ հայրենի աշխարհն սղողած.
Եւ այդ յաղթական ձայնը մեծ ոյժով,
Իր գիրկն է կանչում՝ որդիքն մոլորւած:

Թրքի հարէմի գրկից պրծւածներ,
Բաւ է օտարի շէմքը դուք մաշէք.
Գարձէք վարելու, ազատ ձեր հողեր,
Ու միշտ հայրենի օջախն վառ պահէք:

Քաղցի ու սովի մնացորդ եղբայրների,
Ազատ մեր երկիրն գնանք վարելու:
Հերոս պապերի՝ անթիւ շարաններ,
Կանչում էն կանչում ազատ ապրելու:



Դ Ա Ր Բ Ի Ն

Դարբին է՛յ դարբին դարկիր զընդանին,
Մենք դեռ շատ ունենք երկաթ սև հանքեր,
Կոիր ու կոփիր զէնքեր անագին,
Այդ թոյն մահ բաժնին դեռ կան թշւաններ.

Խմբեր են նրանք՝ անթիւ անհամար,
Դալին հա գալին թափւում անդադար
Լողում ծարաւի արեան ովկեանում
Կամքը լոկ ոյժի, այդ է ցանկանում: -

Ջարկիր պինդ սալին մուրճդ է՛յ դարբին,
Դեռ չէ դադարել միտքը մարդկային
Արխն, արցունքի՛ ճամբովն է գնում.
Կհանքը անողորմ մահւան տագնապում:

Բանւոր ընկերներ՝ ձեր օրն է այսօր,
 Եկէք տօնելու մարդկային մեծ օր.
 Մենք խոս շատւոր ենք ընկերներ բանւոր,
 Դիշեր ու ցերեկ տանջուած ենք բոլոր:

Եկէք տօնելու փրկութեան մեր օր,
 Արիւն, արցունքով քամւած մեր ոսկոր.
 Այսօր գէթ հանգիստ խորհելու եկէք,
 Ձեր դառն վիճակը ամենքին պատմէք:

Թող ձեզ չը խաբեն ոսկիներն անթիւ,
 Նրանք գներ են մեր արեան հաշիւ,
 Եկէք ընդառաջ միասին խմբենք,
 Մեր սուրբ փրկարար օրն թող տօնենք:

ՀԱՐԱՁԱՏ ԵՐԿՐԻ ԱԶՆԻԻ ՉԱԻԱԿՆԵՐ

Է՛յ զուբ հարազատ՝ շարաններ անթիւ,
 Դուք տեղ չունեցաք հայրենի երկրում.
 Ձեզ միշտ առաջնորդ կոյր ամբոխն հազիւ,
 Ընտրեց էր միջեց լերբ գողերն զուլում

Նորա ձեր արեամբ զիզեցին փողեր,
 Թողին և մենակ թշնամու ճանգին,
 Հերոս ճարպկութեամբ միշտ վերջին ժամեր,
 Անթիւ արիւնների թափեցիք անգին:

Իսկ ձեր զիերը սայլերում բարձած,
 Մեր լայն փողոցներն քանրչ էին տալիս.
 Կաթիլ առ կաթիլ արիւնը թափւած,
 Ծըծում էր հողը կարծես թէ լալիս:

Կոյքը հարստի արեամբ ձեր զիզւած,
 Դնւք որ ուզեցիք ձեռք բերել ոյժով,
 Բայց ձեզ գողերի շարքերին դասած,
 Դէպի կառափնատ բարձրացրին սրով:

Տգէտ ամբոխը միշտ կոխւ տեց,
 Չուզեց հասկանալ նպատակն ձեր վեհ.
 Միայն արաքուստ ձեզ դատել ուզեց,
 Ճամբեց գերեզման միջոցն այդ պատեհ:

Իսկ հին սխերիմ տարրը մեր արի,
 Բիրտ սիւ թշնամուն ձեռք ձեռքի տւած.
 Եկաւ ծծելու հիւթն մեր բերբի,
 Մեր սուրբ օջախի՝ երկրին մեր վառւած

Աժօթ. նախատինք՝ թնդ լինի նրանց,
 Ովքեր դաւաճան կը լինեն ազգին,
 Իսկ ձեր իմ եղբայրք, սուրբ կեանքնին վաղանց,
 Հանգիստ թող ամենն սե հողի տակին:

Մատաղ սերնդի սրտի մէջ ազնիւ,
Ցանած ձեր սերմերն մեծ տեղ են բռնել.
Քառս այդ երկրում անհամար, անթիւ,
Վրէժի հետքեր են խիստ ուժեղ բուսել:



Ո Յ Ժ

Երկինք և երկիր՝ տիեզերք ամբողջ,
Ոյժին ենթարկում խոնարհում նրան.
Առանց այդ ոյժի կեանք չկայ մի ողջ,
Բոլորն դէպի նա դիմում են շարան:

Նայիր թէ ինչպէս, մեր անձուկ երկրում,
Իրար լափելով ապրում են գարեր.
Թոյլը ոյժեղին կերակուր գառնում,
Ահա մեր կեանքի իսկական պատկեր:

Կուզես գործածիր միջոցներ հազար՝
Մաքի թէ մարմնի նոյն են և բոլոր,
Կոխ գոյութեան մղում են երկար,
Կեանքի թէ փորձերն, թէ մաքի ոլոր:



Քորտակէ թոյն՝ ոյժի գոռ դիմաց,
 Նա կեանքի կուում իսպառ մոռացած,
 Բնութեան օրէնքն դարձած հաշտարար,
 Գեր ոյժի առաջ անուշ մի պատառ.

Ապրելու համար թոյլը անօգուտ,
 Անշուշտ պիտ կազմէ մի ափ հողակոյտ
 Գոյութեան կուում ոյժն է միշտ տիրում
 Լինելու հարցն է լեզու ընթացքում:

Գեր ոյժի առաջ բոլորն խոնարհում,
 Լոկ ետ վախից նրան ենթարկում.
 Գալիս են թափում ծոցը սև երկրի.
 Մեծ ոյժին հըլու խմբերն թոյլերի:



Ն Ա.

Իմ անձնս նա տեսց.
Սիրտս մըխալ սկսեց,
Չեղաւ մէկը գէթ ատոյ,
«Եղէք սրան կարեկցող»:

Այսպէս իզմուր, անխ անցան,
Կեանքիս օրերն վառ գարնան.
Սիրոյ ժպիտ չը տեսայ
Նրան գերի ես դառայ:

Ա՛խ գիտնայի մի հընարբ,
Որ իմ սըրտիս է մեծ փառք:
Սուրբ՝ կրծքից դուրս թըռած,
Կը քաղէի օդից բաց:

Բայց ես ոյժովն իմ բոլոր,
Բնութեան դէմ թոյլ անգոր.
Ա՛ն մարտընչիլ չեմ կարող,
Իզմուր յոյս է խիստ պանջող:

Հ Պ Ա Ր Տ Ա Չ Ե Ր

Հպարտ աչեր, սեւ աչեր,
Ծիծաղ սիրոյ իմ յուշեր,
Լալիան սիրաս սեւ հարստ,
Չեր վառ տեսքին միշտ կարօտ:

Սեւ սեւ աչեր, էյ աչեր,
Մերախտ կեանքիս վառ աստղեր.
Ես ինձ ամբողջ ձեզանում,
Մարմին դարձած լոկ գանում:

Դուք էյ աչեր՝ խիստ սիրուն,
Չգտում էք բայց, էն հեռուն.
Միթէ գալուկ մտածեալ,
Ես պիտ թողնեմ իմ պաշտած:

Ո՛ւր էք փախչում էյ աչեր,
Կարում սրտիս յոյս թելեր.
Չէ որ ես խեղճ, օրն ի բուն,
Այրում, տանջում ձեր սիրոյն:

Ի Գ Է Ա Լ Ա Շ Խ Ա Ր Հ

Արցնքս ժպիտ՝ սիրոյ ովկեանի,
Ազրիւրն է ամբողջ իմ գանն վշտերի,
Լուսն է հոռուր ես ծաղիկ նորաբոյս,
Մաքեր... բաժ յուշերն իմ անյոյս:



Մտքերս ամբողջ՝ յուսով հրազոնն,
Մարեց իմ կեանքիս յոյժերն վառվառնն.
Զգտումեմ եւ ես դէպի այն հեռոնն,
Ուր սիրոյ զրկում շատերն են թագունն.

Դիմում եմ և՛ քեզ՝ իգէալ աշխարհի,
Արմատն ես ամուր դադանի սրտերի
Ահռելի վշտեր, մտքեր բազմազան,
Ովկեանումդ վրդով, ծփում անսահման:

Տիեզերք անհուն՝ սիրոյ օթեան,
Ապրում են թագուն ծոցումդ անբաժան,
Վաս կոյսի սէրը՝ խանդը մտքերի,
Իմ ամբողջ կեանքի հյւթն է կորովի:

Գիշեր ու ցիբեկ սիրտս մըղկառոյ,
Ալեկոծ եզրից դիտում դոյ ի դոյ.
Աստ ինձ, ուր ե՛ն, եկոյ փառելու,
Ես նրանց կարօտ, ես նրանց հրյու:

Շ Ո Ւ Շ Ա Ն Ի Ն

Մեր փողոցովն անցնելիս,
Դու սիրում ես դիտել հեռւից,
Բայց սև աչերն սիրունիս,
Մաշեց սրտիս թիկերն ցաւից:

5439 p. 41

Երբ զով քամին սուշելիս,
Քաւիչ վարսերդ հանգիստ շոյում.
Ա՛խ երբ ընկնին իմ ձեռքիս,
Ես պիտ բանամ փունջը սիրուն:

Ոտքեր ունես կաքաւիկ,
Ման ես գալի դիւթիչ պարող.
Անցիր մեզ մօտ սիրունիկ,
Զէ՛ որ ես եմ ճամբիդ նայող:

Բոյլդ սիրուն չինարիկ,
Թո՛ղ, քեզ նային աչերս ծարաւ.
Սիրող սրտի բուն գազանիք
Կուզեմ աիրել յուշերն անբաւ:

Գեզ է իմ սիրտն ըսպասում,
Է՛յ կոյս Աստուած՝ կեանք ներշնչող.
Միթէ իրուր երազում,
Ա՛խ այդ կեանք չէ, այլ ցաւ տանջող:



Ի Մ Ե Ր Ա Չ Ը

Երազս պատմեմ, լսիր էյ հոգիս.
Մի դէպք է միայն ամբողջ իմ կեանքիս.
Երանի՛ր գայիք փողոցն մեր մէկէլ,
Կուզէի բոյլդ տեսնել, երազեր:

Մայիսեան օր էր. հեռու էն երկրում.
Ծիրանու տակին՝ մեր էն տան բազում,
Նայելով, դիտում ծառը նորարաց,
Աչքերս անվերջ դեպի վեր յառած:

Ինչէր եմ տեսնում, յանկարծ այդ պահուն,
Սպասող աչերս ձեռքով պինդ փակում,
Յետ նայում իսկոյն, դէմս դուն կանգնած,
Իմ սիրուն Շուշան, հիւսերդ արձակած:

Բարախող սիրտս գործեց թռիչքներ,
Իմ գրկում գտայ, և քեզ էյ յուշեր.
Գրկախառն համբոյր սիրոյ ծարաւից,
Ես էի բազում, էն վառ այտերից:

Չը գիտեմ յետոյ ինչեր կատարեց,
Մենք երկսով էինք սեղմած մօտիկից,
Մենք իրար սիրում, իրար հետ փարձում,
Զարթնում եմ յանկարծ երազս չքանում:



*
* *

Տխուր ու տրտման յուշերն իմ ցաւոտ,
Անցեալ վառ կեանքիս օրերին կարօտ.
Եւ ես զգնում եմ ցաւերին տարած.
Իզո՛ւր են յոյսերն, իզո՛ւր միշտ խորհած:

Իմ էն վառ օրերն, երջանիկ ժամերն.
Երբ ես յիշում եմ կրկնում իմ ցաւերն.
Ա՛խ, այդ ի՛նչ կեանք էր, ինչո՛ւ շուտ անցան,
Միթէ դեռահաս ես չէի արժան:

Ասում բարիի անէծքով լցւած,
Ապրել եմ ուզում, կեանքից չեմ զրզւած
Սիրտս բարախող՝ դեռ շնչում ազատ,
Եւ ես ամուր եմ իմ կամքին հաստատ:

ԻՄ ԿԵԱՆՔԻՍ ԱՍՏՂԻՆ

Իմ վառ օրերի աստղն էյ փայլուն,
Ո՛ւր տեղ է արդեօք, էն իմ սիրասուն.
Ես կուզեմ սիրել, նորան և պաշտել,
Շնչում եմ չէ՛ որ, ապրում եմ դեռ էլ:

Ցաւ վշտերն իմ խոր՝ պտամիր դուն նորան,
Մենակ եմ նժգե՛մ՝ անտէր, անպաշտպան.
Ուզեցի սիրել, սիրել յաւիտեան,
Քայց ծաղիկ կեանքիս բացի գերեզման:

Դեռ շնչող կեանքիս գարձն ծիծաղկոտ,
Յուսով եմ պիտ գայ՝ որին ես կարօտ.
Մանգ սիրոյ կոյսի. ժպիտն էն միայն
Պիտ կեանքիս արեւ պահէ յաւիտեան:

Ո՛ւր որ է ման եկ, գտիր դուն նորան,
Տանջանքի բովում բաւ է որ լողամ,
Փրկիչն է սրտիս մահւան օրերի,
Առանց ես կոյսին բաժին եմ հողի:

Միթէ քեզ ասող, նա բնաւ չի լսիր,
էլ ինչո՞ւ համար, ասում ես ապրիր.
Գերեզմանն հրէջ՝ թող ինձ պարփակէ,
Գէթ այնտեղ հիւլէիս հողը կը ծըծէ:

Մ Ի Գ Ի Շ Ե Ր Մ Ի Ա Յ Ն

Եւ ես տարւած մի գիշեր,
Սիրտս ուրիշ սէր փնտռեց,
Քո ընթացքը անտարբեր,
Ինձ օտարի գիրկ նետեց:

Ե Ր Կ Ո Ի Է Ի Փ Դ Ո Ի Ք

Ապրիլեան գիշեր՝ երկու էիք դուք.
Մեր դռնոյ անցաք քայլով կամացուկ՝
Ընկերս ծանօթ ձայնեց ձեր մէկին,
Նա եկաւ մօտիկ, իսկ դուք ոչ անգին:

Քեզ էի դիտում՝ գիշերն լուսաշաղ,
Աչերիդ դիպաւ, աչերս իմ պաղաղ,
Կարդացի կեանքս նրանց մէջ վառվառն,
Մտքերս ամբողջ այնտեղ են թագուն:

Ապրում եմ, սիրում. իմ այդ մտքերով,
Կը գտնես դուն քեզ այնտեղ ապահով.
Սիրիք դուն նրանց սրտով նրբազգաց,
Քոնն են այդ բոլոր, վաղուց մտացւած:

Ձգում եմ և ես, անգոր ջո գիմաց,
Մաքերով հըլու, մարմնով կաշկանդւած.
Յուշերն իմ խորունկ միտքս պարփակում,
Ինձ այդ բոլորը երազ է թւում:

Ի Մ Հ Ա Ն Դ Ի Պ Ո Ի Մ Ը

Ես Ձեզ տեսայ անցնելիս:
Հարը շարժեց ցաւ սրտիս.
Ծիծաղ ժպիտ վառ կոյսի,
Լոկ մի բոպէ զգացի:

է՛ն հայեացքդ դիւթական,
Մէկ էլ դարձրու էյ Շուշան.
Կեանքիս թեւերն են այնտեղ,
Ապրել կուզեմ սիրագեղ:

Ձով տատանման քամիի,
Փարւում մազերդ հոլանի,
Ես ուզեցի հեր ովկեան,
Գիրկս թափել անպայման:

Բայց շատ հեռուն դուք անցաք
Քայլ չարեցի համարձակ,
Տխուր, տրտում տուն դարձայ,
Երազ թէ ձիշտ չիմացայ:

Ի Մ Յ Ո Յ Ս Ի Ն Ա Ի Ա Կ Ը

Մեծ ովկեանի ալիքներ,
Ո՛ւր էք տանում իմ նաւակ,
Իմ արցունքի մեծ յոյսեր,
Թափում ծովը անյատակ:

Ինձ յոյսերն են մարմնացնում,
Է՛յ ալիքներ ովկեանի,
Եղէք հանդարտ այդ ժամում,
Իմ վառ յոյսերն չի թոռմի:

Իմ նաւակը մեծ յոյսի,
Մովը խորունկ տատանում,
Կարծես անիւն իմ բախտի,
Մահ յորձանքին ենթարկում:

Ըմբոստ տարրի ալիքներ,
Վիշտս կուզեմ ձեզ խառնել,
Թող ես շնչեմ թարմ օդեր,
Վշտից ազատ գէթ լինել:

Ալիքն անգուժ ովկեանի,
Յուսոյ նաւակն խորտակեց,
Առաջն անգոր ոյժ բռնի,
Վերջին յոյսն իմ մարեց:

Բ Լ Բ Ո Ի Լ

Վարդի թփերում է՛յ բլբուլ երգիչ,
Երբում ամենքին բո ցաւերն յուզիչ,
Ես էլ եմ ուզում է՛յ իրէալ բլբուլ,
Զարկել իմ սրտին լսրերը շատ թոյլ:

Երկնք ժամանակ տանջում եմ մտքով,
Սիրտս գերիշխող վառ կոյսի սիրով,
Բայց իմ չարաշուք անողորմ բախտը՝
Դարձրեց ամայի վառ կեանքիս զբախտը:

Կեանքս կապերով, մշտառե պինդ կապ,
Եզած է գերի կոյս սիրոյն հրատապ,
Փախչել գէպ հեռուն ցանկացայ ես միշտ,
Սէրը խանդ կոյսի ինձ գերեց ընդմիշտ:

Այժմ ես անգոր՝ է՛յ երգիչ յամայն
Եկնյ պատմելու վշտերն իմ ունայն,
Դէպի գերեզման տանող իմ մտքեր,
Վշտիդ հետ խառնել, ապրելու յոյս էր:

Անբախտ ես ծնւած դու էլ ինձ նման,
Իզո՛ւր յոյսեր են գիրկ նետող մահւան,
Գիշեր ու ցերեկ անզազար անքուն,
Անվերջ երգում ես քո վարդ'դ սիրուն:

Լ Ո Ւ Ս Ի Ն

Լողան լուսին սև մութ ամպերն արդէն անցան,
Ճամբադ ուղից տանում կոյսի է՛ն օթևան,
Թափէր շողերդ, լոյս տուր նորան գուրգուրանքով,
Թո՛ղ նա ապրի, թո՛ղ նա շնչէ՛ քո պաղ լուսով:

Նա տիրում է՝ մտքիս ծալքերն վազուց ի վեր,
Դէպ է՛ն ձգտում անվերջ սրտիս յաւերժ յոյսեր,
Դէթ քո գէմքին ես նայելով է՛յ մեղմ լուսին,
Պապակ սիրտս քիչ զով կաննէ այս թանգ ժամին:

Լոկ մի բույէ թէ լինէի քո փոխարէն,
Չէի փոխել ամբողջ երկրին այդ մի բույէն,
Մարմնացումն է մտորումներն իմ մտքերիս,
Չէ որ բոլոր, այդ ապրումներն է վառ կեանքիս:

Բայց լուսինք պաղ լուռ ու մունջ անցաւ արագ,
Տխո՛ւր, տրտնւմ նա ինձ թողեց գիշերն մենակ,
Իմ մէջ անշէջ մտածմունքներն խարոյկ սարքին,
Ե՛լ չը եկաւ անուշ քունը իմ աչերին:

Մ Ա Յ Ր Ե Կ Ե Ղ Ե Տ Ո Ւ Մ

Ինձ յայտնեցին նա այսօր եկեղեցումն բազմազան,
Աչերն դէպ վեր ամբարձած աղօթում էր լուռ, տնձայն,
Ա՛խ գիտնայի որ այնտեղ, նա կը լինէր թէ այսօր,
Կը լինէի ան կողքին լսող միայն լուռ բոլոր:

Կը ցանկայի իմանալ, Ո՛ւմ համար է աղօթում,
Առաքումովն շերմհունդ՝ ո՛ւմն է ձեռքերն կարկառում,
Թէ ինձ համար. նա իզո՛ւր այն Աստ՛ծուց պիտ խնդրէր,
Չէ որ ինքն է լոկ կեանքիս պահող կեանքն կարող ժիր:

Դիշէր, ցերեկ քուն կտրած, ես ծնկաչոր աղօթում,
Վառ յոյսերի միշտ սիրով նրա խօսքին սպասում,
Ե՛ն իղէային եմ պաշտում, որի նիւթն է նա կազմում,
Ե՛ն փայտայած իղէալով, կուզեմ շնչել բաց օդում:

Պ Ա Ր Տ Ի Չ Ո Ւ Մ

Խիստ վաճա յոյսով, է՛ն ման եկած պարտիզում,
Իզո՛ւր աչերս յառած դրանն սպասում,
Դիտում էի ամեն անցորդ անզազար,
Բայց միս հրքէք ես չը տեսայ իմ գոհար:

Դառն կեանքի՛ խաբւած մտքի գուրգուրէն,
Մերտս լացեց մտածմունքի ցաւերէն,
Աչերիս մէջ ջրի հոսանք գոյացան,
Ես ինձ այնտեղ լոկ զգացի անպաշտպան:

Տխուր, տրտնւմ ես ուզեցի յետ գառնաւ,
Մերժին ոտքերս, ու չարեցի ոչ մի քայլ,
Կանգնած դիտում ամեն զոյգերն թեանցուկ,
Ուրախ, ուրախ ման են գալիս կամացուկ:

Նախանձն երկար թոյլ չը տեսց սպասել,
Դողդոջ մարմնովս ես ուզեցի տուն քայլել,
Ախ շփոթեալ մեծ պողոտան շուտ անցայ,
Ինձ հետ բերած յուշերն դիրի ես դառայ:

Մ Ա Յ Ի Ս Ե Ա Ն Ծ Ա Ղ Ի Կ

Սիրուն ծաղիկ մայիսեան,
Միակ նշանն մեր գարնան,
Քո անուշիկ հոտն աննման,
Տենչ լարն սրախս դուրդուրան:

Ես կուզէի իմ կրծքում
Դուն լինէիր զարդ սիրուն,
Բայց քո թըփին նորահաս,
Զուգեմ լինել պատուհաս:

Դուն էլ ապրեր գուրգուրիկ,
Քո թըփի հետ էջ ծաղիկ,
Թող քո բլբուլն անբաժան,
Քեզ վայելէ անսահման:

Ա Ր Յ Ն Ք Ո Տ Ա Չ Ե Ր

Արցնքոտ աչիւր, ես ձեզ եմ դիմում,
Դուք էք իմ կեանքի հարազատ ուղին,
Ցոյց տէք ինձ ճամբան, ես հւր եմ գնում,
Արգիծք չէ խաբում՝ ինձ կեանքի ուղին:

Սորտակեամ սրտով՝ գնում եմ յառաջ
Անհաստատ քայլով, նոր կեանքիս ուղին,
Զգում եմ ես ինձ ամենքից շատ քաջ,
Բայց հւր եմ գնում իմ ճամբան մթին:

Արցունքներ քամող էջ աչեր սիրուն,
Սիրավառ լարերի աղբերն իմ սրտի,
Այդ փշոտ ուղին հեռուն է տանում,
Զարգեած սուրբ սիրոյ յուշերն իմ մաքի:

Փարեւու եկայ միասին ձեզ հետ,
Ուր էք գուք փախչում էջ աչեր ալիք,
Ես էլ եմ ուզում ճամբաս այս անհետ,
Անորոշ կեանքին չը մատնէ հրբէք:

Ի Մ Ս Պ Ա Ս Ո Ւ Մ Ը

Գիշերն անքուն ես ծնկաչոք աղօթքով,
Մտաբերում տենչերն սիրոյ շանթհարուած,
Ցերեկն ամբողջ սպասումի յոյգերով,
Նայում ճամբիդ ով իմ բաղդի լոկ Ասուած:

Մըտիս լարի գուն վառ յուշերն մարեցեր,
էլ ինչո՞ւ ես ան ինձ տանջում քո ճամբին,
Միթէ կեանքիս սև անբախտիկ իմ օրեր,
Այսպէս իզո՞ւր սպասումով պիտ անցնին:

Ձէ որ, ես էլ դեռ նոր կեանքը թեակոթ,
Ձեզ հետ միայն կուզեմ ապրել ու շնչել.
Ի՞նչն, որ ամբողջ իմ վառ սիրտն բարախող,
Ծաղիկ կեանքովդ սիրոյ գերկն ես ձգել:

Ամբողջ մարմնովդ դարձած կեանքիս միս արիւն,
Սպասումի դեզերանքով խորտակում:
Իմ թարմ յուշերն աղբիւրն սիրոյ երազին
Մնացորդ յոյզերն մարին ամբողջ իմ կրծքում:

Բաղխող սիրտս լացի աղբիւր է դառել,
Աչերս անգամ անկարող են քամելու,
Միթէ է՛յ կոյս պիտի կորչեմ անվայել,
Ձեր է՛ն ճամբին սպասելով միշտ հըլու:

Ձէ, իզո՞ւր է, չեմ հաւատալ մտքերին
Եթէ նոյնիսկ լինէ բոլորն իրական.
Որ համբերող սիրոյ շողի կայծն վերջին,
Դեռ կը պահէ կեանքիս աստղն անբաժան:

Ն Ո Ր Ա Ռ Ա Ի Օ Տ

Բացելի՛ր, բացելի՛ր, է՛յ իմ կեանքի նոր առաւօտ,
Պիշերն ամբողջ բեզ սպասող սիրտս հարոտ,
Միրած կոյսին գերի դառած բոլոր կաղմով,
Բնու է ինչքան, ցաւեր կրեց վառ կարօտով:

Թո՛ղ գէթ շնչէ, կոյսի կրծքում, թարմ օդն ազատ,
Դեռ նոր բացւած իմ առաւօտ՝ վառ առաւօտ.
Ահա հեռից աստղն կեանքս նոր կը ցոլայ,
Մորմոք սրտիս ցաւերն անգամ կանյայտանայ:

Թողէ՛ք վշտեր սիրտս ուրախ կուզէ փայլել,
Իմ առաւօտ, իմ կեանք սիրոյ, ծնունդ առել.
Թո՛ղ իմ աստղն երկինքն անամպ փայլէ, ցոլայ
Որի համար սիրտս արագ կը թրթռայ:

Բացելի՛ր, բացելի՛ր է՛յ իմ կեանքի վառ առաւօտ,
Կուզեմ ապրել դեռ նոր բացւած լուսով ազօտ,
Բաղխող սիրտս՝ այդ թարմ լուսին վաղուց կարօտ,
Բացելի՛ր զոնէ, շողերն բուժեն վէրքերս հարոտ:

Ա Ղ Բ Ի Ի Ր Ի Մ Օ Տ

Ձինջ աղբիւրի կողքում կանգնած,
Դուն դիտում ես լուռ ու մունջ,
Կաթիլ, կաթիլ թափւում է ցած,
Ու չի անում ոչ մի շունչ:

Դուն սիրում ես նայել նորան,
Խորհրդաւոր քո դէմքով,
Բայց էն ջուրը, մարուր ահան,
Մի ազբիւր է յուժ թափով:

Սիրիր խեղ լոկ այդ ջրից,
Իմ իդէալի վառ ազբիւր.
Ծարաւդ մարող կաթիլներից
Դուն կըստանաս կիանք մի նոր:

Ի Մ Կ Տ Ա Կ Ը

Մահւան ճիրանում անկողնում պառկած թէ դուն ինձ գտնես,
Հագիր սգազգեստ վարսերդ արձակ նստիր լուռ կողքիս.
Քո նուրբ մատնիքով շարունակ շփիր ճակատս իմ յոգնած.
Յայնժամ ես հանգիստ կը քնեմ ընդմիշտ արտունջ էլ չարած:

Ինչ սառն հոգի տակ, որ ինձ պիտ թաղեն ցանիր ծագիկներ,
Սե, դառն արցունքով, դուն նրանց ջրեր ամեն գիշերներ,
Հիւլէքս ցրնւած կը ծծեն նրանց երկար և կապրեն,
Այդ թարմ ծաղիկներով դարդարւած կը ծքուճդ ես էլ կը շնչեմ:

Ամեն երեկոյ, դուն այցի գալուն. իմ թարմ շիրիմիս,
Դիտցիր, որ ընդմիշտ բաժանւած ապրում օդումս իմ հիւլէս.
Վառած խունկ ու մոմ դուն նրանց դիմիր սիրոյ յոյզերով,
Ելի դուն կապրես, կը շնչես ազատ. նրանց հետ շատ սիրով:

Թ Է

Թէ գաս այցելու, ծանր վշտերով
վիրաւոր սրտիս,
Ովկեան սե մազերդ՝ թափած մէկ կըծքով,
մօտեցիր գրկիս.
Յայնժամ վիրաւոր կըծքիս տակ հաստատ,
սիրտս սե հարոտ,
Ուրախ ողջայնով կընդունէ պատրաստ.
քո բոյին կարօտ:

Թէ գաս անցնելու քայլով կաքաւիկ՝
մեր դունէն կամաց,
Մտիր աղքատիկ սննեակն իմ փոքրիկ,
կուրծքդ լայն բացած.
Իմ թոյլ բազուկովս գիրկս պինդ սեղմած,
համբոյրներ անվերջ,
Բորբոք շրթունքով մարմար էն կըծքից,
կը բազեմ խիստ շէջ:

Թէ ինձ փոզոցում տեսնես ման գալիս,
առանձին մինակ,
Կամաց մօտեցիր թեանց իմ կողքիս
Արա դուն կատակ:
Ուրախ իմ սիրաւ կանէ թոխչքներ,
աշխարհից անջատ.
Եւ ես լոկ կըզգամ ամեն այդ ժամեր,
թանկ և հարազատ:

Թէ դուն ինձ գտնես նստած պարտիզում,
ախուր ու տրտում,
Կիացիք որ սիրաս միշտ լաց է լինում
հրը քեզ չի տեսնում.
Անշուշտ կը նստես ու չես ինձ մերժիր,
այդ շգիտեմ ուղիղ,
Ծիծաղ վառ ժպտով հնչէ պիտ լարեր,
սրտիս իմ տաւիղ:

Թէ դուն իմանաս ինչն է ինձ համար,
աշխարհի միջում
Թանգն ամենից, քաղցրն անհամար,
դուք էք այդ սիրուն.
Ամբողջ իմ կեանքը՝ ովկեան ալեկոծ
տատանւում սիրուց,
Ու դուն իշխում ես մտքիս խիստ սիրած,
քո կեանքով վաղուց:

Մ Ի Հ Ա Յ Ո Ւ Հ Ի

Մի հայունի սևահեր,
Տեսայ շքեղ դահլիճում,
Կրկին սիրոյ վառ կայծեր,
Ես զգացի իմ սրտում:

Ես նրանից ուզեցի
Փախչել, փախչել շատ հեռու,
Բայց հայեացքովս զարնեցի,
է՛ն գեղեցիկ հայունու:

Նա սիրուն էր իր բոյով,
Նա էր միակ իմ սրտով,
Պար էր գալիս կաքաւիկ,
Նուրբ ոտներով անուշիկ:

Նրա անունն էր Շուշան,
Մէկն էր այնտեղ աննման,
Իւր խօսքերով գոհարիկ,
Նա էր կեանքիս շատ մօտիկ:

Ես ուզեցի համարձակ,
Շնկերուհով միատեղ,
Զբօսնելիս շատ շքեղ,
Անեկ նրան առաջարկ:

Վախն զգալով ամօթի,
Միրոյ խանդն իմ մէջ վառ,
Մի կերպ առի ես դադար.
Առաջարկի քայլ չարի:

* * *

Թափառելով ես անցկացրի իմ խանդ օրերն ծաղիկ գարնան,
Սիրած կոյսիս խիստ վառ սէրը՝ չը յաջողեց ինձ վայելել.
Ախ շատ ավստս էլ յիտ չեն գալ անցած օրերն է՛ն վառ գարնան,
Կէթ կարենամ տաղտուկ կեանքովս ազատ օդում անգամ շնչել:

Կոյսի սիրոյ՝ ես յանձն առայ, ոտնահարել գործ ու պատիւ,
Իզճւր անցան բոլոր ճիւղերն, իմ յուշերի ցաւով անթիւ.
Թափառելով անխ վատնեցի ես անխնայ ոսկի ժամեր,
Աւանդ իմ մէջ խոր բուն զրին խիստ զգայուն սև ծով զարդեր:

Ն Ա.

Մի ակնարկով նս ինձի,
Արաւ իրեն անխ դերի.
Էն նրբակազմ դարձւածքով,
Սիրտս այրից խանդ սիրով:

Նա ինձ անգամ խօսք չառաց,
Երբ դիտեցի անդադար.
Սև աչերը բուժարար,
Ինձ էր նայում լայն բացած:

Փռւած մազերն մէջքով մի,
Մինչ ոտներն տարծւած.
Սիրտս քամոց արցունքի
Ովկիան դարձրեց անմոռաց:

Նուրբ կազմուածքը չինարի
Օրօրում էր հոլանի
Իմ մտքերիս ծալքեցում,
Անջնջելի տեղ բռնում:

Գեղեցկութեան այն տիպար
Մեծ վարպետն է անկարող,
Իւր վրձինով զուրս բերող,
Այդ իղէանլը լուսավառ:

Ամբողջ կեանքիս շաւիղում,
Նա է միայն իմ իղէալ,
Անգոր ոյժով միշտ ձգտում,
Այդ իղէալին կատարեալ:

Ի Մ Ս Ի Ր Տ Ը

Իմ սիրոյ կեանքում միանգամ միայն,
Բերկրանքով սիրտս սկսեց խնդալ:
Ծիծաղը կոյսի այտերով փայլուն,
Երբ իմ վառ սրտում քիչ ուզեց իսպալ:

Ի Մ Վ Շ Տ Ե Ր Ն

Քացիր քո խորքը՝ ովկիանի ալիք.
Եկայ թափելու վշտերն իմ սրտիս,
Նրանց հետ միասին ունիմ շատ դազանիք,
Պահել չեմ ուզում աշխարհն իմ սրտիս:

Թող իմ ալիկսձ սև վշտերն դաժան,
Այնտեղ քո ծոցում պարփակեմ ընդմիշտ,
Ու ես անսահման վշտերից բաժան,
Կապրեմ գեռես էլ կեանքի հետ շատ հաշտ:

Դեռ նոր եմ մտել գարնանն իմ կեանքի,
Սիրտն էլ իմ ուրախ ուզում է ապրել,
Բայց այդ խոր ցաւերն՝ սե դաժան մահի,
Իմ խղճուկ սրտին դադար չեն տուել:

Երկինք ու երկիր՝ իմ ծաղիկ կեանքիս,
Գարնան օրերն մաշեցին իսպառ.
Ու այդ մահ վշտերն իմ անզօր սրտիս
Կեանքը վաղաժամ խորրդ քիչ հետ տար:

Ն Ր Ա Ն

Քեզ սպասող՝ յոյզերս մարին,
Իմ վառ աստղն. քո էն ճամբին.
Ու երազող միտքս գերի,
Դարձրի անվերջ քու յուշերի:

Իզո՛ւր յոյսեր, իզո՛ւր մտքեր.
Ես ձեզ տածի այդ վառ օրեր,
Իմ վառ գարնան ժամերն անզին,
Ես վատնեցի ձեր էն ճամբին:

Ես ո՛ւր գնամ էյ իմ Աստուած.
Ես ո՛ւմ դիմեմ աէրն իմ փառաց.
Ձէ որ՝ դուն ես սրտիս պաշտած,
Ամենքիցն էլ աւել սիրուած:

Արի, արի՛ դուն ինձ մօտիկ,
Ել մի անիր խօսք զրուցիկ,
Մենք միասին ապրենք ազատ,
Կռպենք մի կապ մեր մէջ հաստատ:

Որ մեզ չասեն անբախտ զոյգերն,
Իզո՛ւր կրին սիրոյ ցաւերն.
Նորակոկոն օրերն գարնան
Դեռ չբացւած անցան ունայն:

Դ Օ Ն Ի Ա Փ Ի Ն

Նստած էի Դօնի ափին,
Տեսայ սիրուն մի հայ աղջիկ.
Նա գալիս էր ջրին մօտիկ,
Միշտ փայլելով ծիծաղ դէմքին:

Սե աչերով նա ինձ նայեց,
Սրտիս մէջը քամեց արցունք.
Բղխում որպէս գետի ակունք,
Արտասուքը իմ աչերից:

Նրա կազմածքն էր նիհարիկ
Մազնիտի պէս ինձ կը քաշէք.
Թափւած մէջքին ովկիան մողեր,
Բոյովն էր մէկ Չնաշխարհիկ:

Նրա տեսքին չկար նման,
Գեղեցկութեան չափն անսահման,
Մի ակնարկով գերի դառան,
Իմ մտքերն վաղաթառամ:

Ես ուզեցի գրելի նորան,
Բայց համարձակ չարի մի քալու-
Հէգ բնութեան սև անխճեալ,
Բախտն ինձի չուզեց նրան:

Իմ անէծքներն զլթին թափւին,
Չար բնութեան էջ իմ Աստուած
Չուզեց իսպառ տեսնել ապրած,
Մեր երկուսին ախ միասին:

Օ Տ Ա Ր Ո Ի Հ Ո Ի Ն

Գիտեմ շիկահեր օտար կոյս սիրուն,
Ինչով ես բռնւած, ինչ ես գուն ուզում,
Գիշեր ու ցերեկ դռնակն իմ սրտի,
Բաղխում ես ոյժով՝ սիրոյ վառ կայծի:

Ծիծաղ այտերով զիմեցիր ինձ շատ,
Իզուր քո գովքդ դուն թափիր առատ,
Անգամ չը խորհիր թէ ճշմն ես զիմում,
Չէ որ չես կարող ապրել իմ սրտում:

Այնտեղ իշխում է՝ մի հայու աղջիկ,
Իմ վառ Շուշանիկ, իմ կեանքի աստղիկ,
Ամբողջ իմ կամքով գլուժ եմ անզօր,
Նրան եմ պաշտում մտքերն իմ բոլոր:

Ես ինձ աւելի մոռանալ կուզեմ
Քան իմ մէջ ապրող վառ չքնաղ կոյսին,
Աստղն իմ սրտի՝ նա է մի հատիկ,
Արեւն իմ կեանքի նա է շողշողիկ:

Մ Ա Յ Ի Ս Ե Ա Ն Օ Ր Ե Ր Ի Ն

Տեսայ պարտէզն յուժ գեղ կոյսին,
Ման էր գալիս այլէով,
Նա նայում էր աչքին տակին,
Ինչեր անցնում չորս կողմով:

Նրա դէմքին վայլեց ծիծաղ,
Կարծես թէ ինձ էր կանչում,
Այն վառ ծիծաղն մտքումս ուրախ,
Դէս էն օրից միշտ թառում:

Գրկել անվերջ կոյսն իմ սրտի,
Փափագս էր բոկ էն վայրկեան,
Բայց ինձ անոյժ ես զգացի,
Դիմացն էն հոժ բազմութեան,

Ախ նա անցաւ էլ յետ չեկաւ,
Արդեօք յճւշ էր, թէ երազ.
Մտքերս խաբւած յուսով անբաւ,
Ես տուն դարձայ հազիւ հազ:

Տեղս պառկած ամբողջ գիշեր,
Արցունք քամում դող ի դող,
Սիրոյ նիւթն սրտիս ոլոր,
Նա էր դարձել լսի տիրող:

— — —
*
* *

Ախ նա գնաց էլ յետ չեկաւ,
Եարոտ սիրտս իր հետ տարաւ:
Ախ ու վախին եղան գերի
Ոսկի ժամերն ծաղիկ կեանքի:

— — —
ԻՄ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ Շ-ԻՆ

Կանաչ պարտիզում ուր շատ անգամներ,
Տխուր ու տրտում վտանել եմ ժամեր.
Կրկին ուղեցի փորձել գէթ անգամ,
Բազդս անողորմ պարտէզն այդ վերան:

Իմ մէջ բուն դրած խանդը վառ սիրոյ,
Վերջը ինձ նետեց միջոցն այդ յուսոյ,
Դողդոջ քայլերով շրջում եմ մեռակ,
Լցում աչերիս արցունք խառն կրակ:

Եւ ինձ այդ պահուն զրկւած Շուշանից,
Անբախան եմ զգում, նոյնիսկ ամենքից.
Յոյսը վառ սիրոյ եկաւ ժպտալու,
Հէնց այդ նեղ ժամին հասաւ օգնելու:

Հեռւից դիտում եմ յանկարծ Շուշանին,
Է՛ն նոյն ալլէով մեռակ անցնելիս,
Փնտռել էր ուզում կարծես թէ մէկին,
Իսկոյն մօտեցաւ ծանօթ օրիորդին:

Սիրտս բարախո՞ղ հէնց այդ էր ուզում.
Վայրկեան չը կորցրած նրանց եմ մօտենում,
Ծանօթ օրիորդով ձեռքն եմ խնդրում,
Առանց քաշուելու դէպ ինձ է մեկնում:

Շատ պինդ սեղմեցի ձեռքն Էն փափուկ,
Այրւած իմ սրտի թելերն Էն նրբուկ
Բնաւ չէի ուզում ձեռքն թող անել,
Բայց իմ ընկերոջն գեռ չէր բարեկը:

Գրկել ուղեցի, միջում բազմութեան,
Ափսոս չը տեքց երկար այդ վայրկեան,
Մեռակ մեղ թողեց, անցաւ շատ շուտով,
Մտքերս պարփակեց յուզւած յուշերով:

Է՛յ դու գարունի զով փշոզ բամբի,
Շոյիք հիւսերը իմ սիրուն հարի՛
Նրանք են իմ սրտի թրթսուն թելերն՝
Արգեճք կը գրկեմ, ախ Է՛ն սուրբ մազերն:

Մ Տ Ա Շ Ո Ւ Մ Ի Վ Ա Յ Ր Կ Ե Ա Ն Ն Ե Ր

Գիշեր-ցերեկ թափառելով քեզ որսնում սիրունիս,
Ո՛ւր ես արդեօք, ի՛նչ ես անում, դ՛մւ վեհ պաշտածն իմ հողուս,
Միթէ կեանքն՝ անբախտ խղճի խաղալիքն է միշտ դառել,
Որ ինձ մենակ վիճակն ընկաւ, այդ սև օրերն ախ տեսնել:

Է՛լ այսուհետ չարժէ ապրել, այս սև կեանքում խիստ դաժան,
Որի մէջն ես անզգայ անվերջ ցաւովն եմ լողում,
Ու չեմ կարող պատմել անգամ իմ վերքերն սև մահւան,
Ծանր է վիշտն սիրոյ ցաւի, ուր ես ընդմիշտ տատանւում:

Ես ուր գնամ, և ո՛ւմ դիմեմ՝ իմ դարդերը վշտալի.
Նրանք ինձ հետ ապրում, շնչում, իմ մտքերից անբաժան,
Իւր կոշտ ծոցումն՝ անզուժ աշխարհն տեղ չտուց մի՛նչ անգամ.
Որ ես ազատ գոնէ ապրեմ այդ փշերից ցաւալի:

Իմ թանձր մրմունջի՛ դուն միակ Աստուած
Եղիր կարեկից յոյզ սրտիս մարած.
Ձէ որ իմ միտքս դէպ քեզ է ձգտում,
Ամբողջ ոլորներն քեզանով դարձնում.

Իմ թարմ աղօթքներն դէպ քեզ են ուղղւած,
Յուշերն իմ մտքի վառ կեանքս թռչնած,
Եւ ես ապրում եմ լոկ կեանքից զրկւած,
Քեզ միշտ սիրելով միակ իմ պաշտած:

Իմ ջեք՝ աղօթքով խունկ ու մոմ վառած,
Պաշտել եմ միշտ ձեզ վարդ կեանքն թողած.
Եւ ինձ անհանգիստ կեանքի լայն ծոցում,
Սէրը քո անվերջ ինձ միշտ է տանջում:

Ճ Ա Ն Ա Պ Ա Ր Հ Ի Ն

Երկնքի՛, երկրի՛ իմ միակ Աստուած
Ինչո՞ւ ես ինձնից երեսդ դարձրած,
Միթէ դուն չե՞ս որ, մտքերիս ոլորն,
Քու իշխող կամքով բուն դրել ըստ:

Քո սիրով միայն, ես ալրսում, մարսում,
Ինձնից հեռուն, ո՛ւր ես դուն փախչում.
Իդեւ ես միթէ աղօթքներն իմ ջերմ,
Առաքում դէպ ձեզ իմ սրտի պատկերն:

Գաշտել և սիրել ևս ձեզ պիտ ջանամ,
Մինչ հիւլէքս ամբողջ դադարին անգամ,
Իմ մտքի Աստուած, իմ կեանքի արեւ,
Իմ խօսքս չնչին ընդունէ պարզի:

Մի դարձրու երբէք երես'դ ազնիւ,
Կարօտի ճամբան քայլում եմ հազիւ,
Կորած եմ իսպառ առանց քո տեսքին,
Մի տանջիր իզուր այդ ճամբին մթին:

Ես էլ եմ ուզում՝ նորարանց կեանքով,
Ապրել և շնչել քո սիրոյ թափով,
Եւ այդ սուրբ սիրոյ սեղանի առաջ,
Ինու՞մ եմ ամբողջ իմ սիրտը վառւած:

Երբէք մի տանջիր խաբուսիկ կեանքով,
Իմ օրերն գարնան լցրած վառ յուսով:
Արցունքի աղբիւր հոսեց իմ սրտից,
Երբ գէմքդ դարձրած տեսայ ևս հեռից:

Առա՛ ինձ ինչ՞ե՞ հետու ևս փախչում,
Իմ խոցւած սիրտս կրակով այրում,
Խեղճերին միթէ չկայ մի Աստուած,
Ինու՞թեան կեանքում այդպէս է որոշւած:

Կաշխատեմ բայց ևս ոյժերս լարած,
Խորտակել կամբը բնութեան սոսկաց,
Ես իմ թարմ ոյժով կը պաշտեմ անվերջ,
Քեզ, ո՞վ իմ մեծ ոյժ, աղօթքովս միշտ պերճ:

*
* *

Բացի իմ հարկից ոչինչ չեմ սւգում,
Փառքով աշխարհի էս շքեղ կեանքում,
Ինձ այդ ամենքը, դատարկ է թւում,
Բարձրն ամենից լոկ հարիս գասում:

Մ Ի Հ Ա Ր Յ Ո Ւ Մ

Մինչ երբ պիտ քայլեմ այդ փշոտ ուղին,
Խորշնքը սրտիս մարեց թոյն լեղին,
Արեւը կեանքիս խաւարեց իսպառ,
Այդ փշոտ ճամբին պիտ տանջւեմ երկար:

Իմ կեանքի ուղին հեռուն է տանում,
Թշուառ անբախտիս չարաչար տանջում,
Կուգէի ևս էլ շնչել օդ ազատ,
Բայց կեանքի թոյնից երբէք չեմ անջատ:

Ինչե՞ր են արգիօք յուշերս երազ,
Իմ կեանքի ճամբան արած միշտ մաս-մաս,
Ինչ նորոգ գարունն չը փայլեց գէմքիս,
Զգում եմ արգէն վիշտը խոր սրտիս:

* * *

Յոյսերով սնւած երազած մտքերս,
Ովկեանում Սիրոյ մարեցիք յոյգերս,
Իմ կեանքի աստղն խաւարեց իսպառ,
Ալեկոծ ծովում չունեմ ես դադար:

Այդ ծովում արդեօք երկամր պիտ լոզամ,
Յոյսերով ապրող մտքերով վերան.
Իմ դառն յուշերն ես թւր պիտ թաղեմ
Միս արիւն դառած արցունք կը բամբոմ:

Ի Մ Օ Ր Ե Ր Ի Յ

Ինչե՞ր եմ քաշում, և ինչո՞ւ համար,
Գիշեր ու ցերեկ չունիմ ես դադար.
Անողորմ աշխարհն մթթէ միշտ այգպէս,
Տոչորէ այրէ նորարոյս կեանքիս:

Հանգիստ ու խաղաղ երջանիկ կեանքին,
Ա՛խ ինչ շուտ փոխեց չար աշխարհն մթին.
Քաղցրութեան համը չի տեսած դեռես,
Տանջանքով խաշում վշտերը սրտիս:

Վշտերը սրախո յոյգերը մարիս,
Մարեցին իսպառ ալեկոծ կեանքիս:
Խորտակւած բնկորն իմ նորոգ զարնան,
Զը պահեց անգամ ծոցումն սև ովկեան:

Ա՛խ, ես թւր գնամ, և ինչե՞ր անեմ.
Սոսկումներն այդ դառն՝ անխ. ծւմը պատմեմ.
Վշտալի կեանքի սէրն՝ իմ սրտում,
Կարօտի ճամբին այրե՞մ է այրե՞մ:

* * *

Սիրտս ուզեց խաղ անել,
Սիրտս ուզեց պար անել.
Ա՛խ, նա դնաց էլ չեկաւ,
Կարօտ սիրտս ցաւ դառաւ:

Էլ մի անգամ անխ թէ դայ,
Իրա սիրտը նա ցոյց տայ ..
Եարտո սիրտս միշտ վառւած
Կաննէ փափագն կարօտած:

Շ. — Մ. — ԻՆ

Ա՛խ իմ հարս, ես քեզ համար, թ՛չ ամեն ինչ յանձն կառնեմ
անելու,
Տնւր ինձ ձեռքդ, մի վրդովիր, պապակ սիրտս քո խօսքերով
սրտառու,
Չէ թր բախտն դեռ նոր ծաղկած իմ ալեկոծ վշտոտ կեանքիս
օրերում,
Իէպ ձեզ ձգտող ժպտուն յոյսի վառ յոյսերով փայլել ուզեց սէր
կեանքում:

Ուր էլ լինեմ, ինչ էլ անեմ է՛յ իմ սրտիս պաշտած Աստուած
մի հատիկ,
Գիտցիր որ դուն, իմ մէջ թագուն, ապրում անվերջ սրտիս
սիրով գուրգուրիկ,
Եարոտ սիրտս. քո խանդ սիրով, յուզումների դուռը բացեց
իմ առջ,
Այդ ալեկոծ կեանքին տխուր ենթարկեցի դորով կամքով
մշտահաճ:

Ես ուխտել եմ լինել ընդմիշտ հաւատարիմ սիրող սրտիս
անսահման,
Ուր դուն իշխում դեռ նորարաց իմ վարդ կոկոն սիրոյ կամքով
անսահման,
Բեր համբուրեմ, այն նուրբ մասներն Աստուածային գիւթող
նկարն իմ կեանքի
Որոնց վշտոտ սպասելով ձգտում անվերջ մարտող սիրտս իմ
գորովի...:

Ի Մ Դ Ի Մ Ո Ի Մ Ն!

Մի՞թէ քարից'ն է քո սիրաը շինւած.
Ո՛վ իմ Ծագելի, իմ կեանքի Աստուած,
Դարձրու հայեացքդ անգամ ես տեսնեմ,
Կարօտսձ սիրոյ փափագս իմ առնեմ:

Ի՞նչ մեղք գործեցի, ի՞նչ յանձանք արի,
Որ քեզ սիրեցի արե՛ն իմ կեանքի:
Եկ դուն գէթ այցի մի անգամ միայն,
Աչեր'դ տեսնեմ իմ անգին Շուշան:

Նրանք կը պատմեն ինձ ամեն ազատ,
Ինչ որ ձեր ներսում, իշխում է անջատ.
Եւ ես կը գտնեմ մի ճար, մի ճարակ.
Դսպառ բուժելու թէկուզ է կրակ:

Ամբողջ աշխարհում չեմ ուզել ոչինչ,
Բնւ է ինձ համար՝ քո տեսքը լոկ ջինջ,
Տեսն' էն սիրուն պիտ պաշտեմ ընդմիշտ,
Իմ թարմ յուշերիս վառ կեանքն է նա ձիշտ:

Արդէն մեծ փաստ է չկայ ոչ մի բան,
Առանց պատճառի աշխարհումն միայն,
Իսկ դուք էլ հեռու, մեր էք ան փախչում,
Չէ որ լաւ գիտէք ես ձեզ եմ սիրում:

Ի Մ Խ Օ Յ Բ Ս Ն Բ Ա Ն

Մարեցի՛ք սրտիս՝ լարերը փափուկ,
Անլուր կեանքիս, փշրեցիր անի դուք.
Ովկեանի վրայ նաւակն իմ յոյսի,
Դարձրեց ալիքը քո բախտին գերի:

Երազնն մտքերս գնացին, կորան,
Մնաց լոկ պատկերդ յուշերիս արձան.
Այդ պատկերն գէպքով արի ես ընկեր,
Սե հողի տակին պիտ տանջեմ դարեր:

Աշխարհի օրէնքն՝ անիծւած լինի,
Արեւը մարեց՝ իմ ետուն կեանքի,
Դեռատի օրերս խաւարեց իսպառ,
Ոսկորնեքս անգամ առեցին զազար:

Սիրունիս ապրիք, յախտեան անմահ,
Դադարած սրտիս բաղձանքն է լոկ գա,
Իմ հիւլէքս անշուք ուր կուզեն թաղեն,
Գէթ այսի պիտ գաս միշտ իմ սե հոգին:

Լ Մ ԿԵԱՆՔԻ ՈՒՐԻԱԳԾԵՐԻՑ

Թշուառ աշխարհում՝ չկայ ինձ նման,
Ունայն մտքերով զէրվիշի նման,
Կեանքից ես զգւած սար ու ձոր ընկած,
Գիշեր ու ցերեկ աչիրումս է լաց:

Եւ ես ուխտել եմ, իմ թշուառ կեանքով,
Անցնել այդ երկար փշախառն ճամբով,
Շաղթել կամ յողթել լոկ իղձս է ուզած,
Թէկուզ վիճակն ինձ այլ է արւած:

Ս Ե Ի Ա Չ Ե Ր Ի Ն

Թուխ սեւ աչերին
Աչերս նայեցին
Սիրտս թրթոռն
Քամեց սե արիւն:

Դառան թուրացած,
Դէպի վեր նայած,
Աչերս արցունքի,
Ակունքն աղբււրի:

Կեր լիք արցունքով,
Աչերս քամելով,
Մի կերպ ինձ պահած,
Հասայ տուն աղբււր:

Ն Ր Ա Ն

Դեռ նոր կոկոն ստինքդ մարմար,
Բեր ես ծրծեմ Շուշան իմ հար,
Իմ վառ օրերն նոր յոյս դալար,
Կապրեն գոնէ վայրկեան անմար:

Ապրել, ապրել կուզեմ երկար,
Ախ, դուն ինձի հետուն մի տար,
Մի՛ չարչարիր, ու ինձ տանջիր,
Դեռ չեմ մարած իմ թարմ յուշեր:

Թող ես կրճրիդ անցնիս Շուշան,
Դրոշմեմ հաճույք՝ միակ նշան,
Ուր էլ լինես, ու երբ նայես,
Ձանձլ օրերս դուն միշտ յիշես:

Գէթ դուն կասես՝ Վահէլ, ջիւան
ճերա օրերն իղճեր անցան,
Այդ էլ բաւ է անբախտ կեանքիս,
Ու վերջ դնէ ցաւերն կրծքիս:

Է 3 Հ Ո Վ Ե Ր

Փշրո, փշրո էյ հիւսիսի զով քամի,
Այրւած, քանդւած սիրաս կարօտ քո զովի,
Է՛ն օրւանից, որ ես տեսայ հայուհուն.
Մի գիպւածով ինձ սպանից անարիւն:

Տարէք, տարէք, մարմանդ ու զով էյ հովեր-
Հեռու խորունկ գէպի ծովը իմ վշտեր,
Թողէք այնտեղ խապտ կորչին ծովն անյայտ.
Ինն նոր կոչին սիրտս կապրէ գէթ ազատ:


Ես էլ կուզեմ, ջահէլ ջիւան գէթ ապրել,
Բայց այդ վիշտը ինձ գերեզման է փորել
Բայ ու վախճն սրտ ս լարերն կը գողան,
Տարէք, տարէք, էն շատ հեռուն յաւիտեան:

*
* *

Իմ մտքերիս թանձր յուշերը երազներով ան անցան,
Կարճտ սրտով սպասելով էն վտ Գամբին անսահման,
Արցունք քամող աչերըս վառ ցամաքեցան ան խապտ,
էս աշխարհի դառն վշտերս կեանքս խոցին անզաղար:



ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ



Ք Շ Ի Ա Ռ Ն Ե Ր Ի Ն

(Ֆրանս.—Victor Hugo-ի)

Հարուստ ու ճոխ պալատումդ դուն ապրումես խիստ փարթամ,
Գիտես արդեօք էն թշուառին ինչեր անում սոփն արնաքամ,
Նայիր նրա գունատ գէմքին՝ կարծես հողից նոր դուրս եկած,
Կողքոջ քայլով անցորդներից հայ է մուրում ձեռքն մեկնած:

Ձմրան ցրտին՝ մի փաղոցի մութ անկիւնում նա կուչ եկած,
Սպասում է էն հարձուտին՝ հանգիստ, խաղաղ տունը բաղմած,
Փոքրիկ ձագերն քաղցած ծարաւ մերկ խրճճի յատակն ձգած,
Իւր սն օրն այսպէս է նա էն պաղ ցրտին սղրում ապշած:

Դուն էյ հարուստ լսիր ձայնը բարձունքների իշխող հոգու,
Որ քո սրտում միշտ կանչում է սիրոյ խօսքը էն մեծ մարդու,
Կանցնէն օրերն գիտցիր անմահ դուն չես լինիլ այս աշխարհում
Գէթ ունեցիր բարձր հոգի, որ վսեմն է քո այդ կեանքում:

ՍՕՆ,ԵՏԱ. (Ֆրանս.—Alfred de Musset-ի)

Իմ կեանքիս գորոջն վատնեցի իսպառ,
Կորցրի ես մօտիկ ընկերներ հազար:
Անարատ պատիւս ոտնահար արի,
Որ բարձրն էր, բարձրը ամենից ինձի:

Դիտեցի երբ ես ուղղութիւնն երկրի.
Ինձ թւեց բոլորն բարեկամ կեանքի.
Իսկ երբ ես նրան հասկացայ մօտից,
Թողի ամեն ինչ զգւեցի կեանքից:

Ապրում են նրանք լախտեան անմահ,
Ովքեր են եղել անցեալին հակա.
Իսկ այդ շրջանում ճնշւած դառն հոգսից,
Անուղիղ կեանքի. լացում է հոգիս:

ՄԱՅՐԱԿԱՆ ՍԷՐ

(Ֆրանս.—Sully Prudhomme-ի)

Ամենից վսեմ, ամենից բարձրն,
Մայրական սիրոյ սենեակ կոչում.
Մայրերի միջին յատուկ շատ քչերն,
Կարող են լինել հերոս այդ կեանքում:

Բարձրութիւն երբեք, և ոչ մի պատիւ,
Չէ գրքում նրան այդ կոչման հանդէպ.
Մայրական գթոս վառ սէրն այնիւ,
Մղում է նրան այդ գիրկն հապճեպ:

Անձնագոն լինել լոկ այդ վեհ սիրուն,
Մայրերին յատուկ բառի բուն մտքով,
Մայրն է խիստ սիրով, մեղձ ու լուռ տղուն,
Իւր որդուն գրկում, օրօրում խնամքով:

Մեր կեանքի ուղին միշտ ցոյց է տալիս,
Առանց մօրն մանկան շատ ծանր է ապրել,
Թէկուզ նա լինէ մեծ ու ճոխ խաւից,
Մայրկան գուրգուրն քաղցր է միշտ եղել:

Ինչքան մեծ բան է երեխի համար.
Մօր անուշ մի խօսքն, մի փափուկ ակնարկն,
Բերկրանքով ուրախ հրճուած անգագար,
Փայլախոյն, փարուած գրկում մօր բաց գիրկն:

Անձնազոհ հերոսն ձվ է այն տուղուն,
Ուրիշի համար իր կեանքն է դնում.
Եթէ ոչ մայրն իւր սրտու սիրոյն,
Ամեն ինչ թողած իրենն է դո՛հում:

Ո՞վ է այն ուրախ, ծիծաղն գէմքին՝
Ընդունողն սիրով ամենից մօտին,
Եթէ ոչ մայրն հարազատ կրծքին,
Քրկում է ածուր իւր միակ սրդին:

Ի՛նչ հոգով արի՛ փարուած է սրտուն,
Որ երբէք, երբէք ձգել չի ուզում.
Այլ գթոս սիրով օրն ի բուն անքուն՝
Բալիկին անվերջ օրօր է առում:

Միակն է մայրն լցւած վին հոգով,
Իւր այդ սուրբ պարտքն կատարում պարկեշտ,
Խոնարհուած սրտուն անսահման սիրով,
Վեհանձն սրտի բերկրանքով համեստ:

Յ Ո Ի Շ Ե Ր Ա Ն Յ Ե Ա Լ Ի

(Գերմ. F. Hausdorf-ի)

Երկու վագեմի շատ մօտ ընկերներ,
Ընկած կուի դաշտ վերջին բուսէներ՝
Կեանքի ընթացքում երկուան էլ տարբեր,
Անջատ իրարից տեսել են օրբու:

Մէկն յիշում է մահն սիրուհու,
Թողած իր հետքից կակիծ սրտատու.
Պատկերն անցեալի կանգուն միշտ իր մէջ,
Տիրում անգագար սէրն վառ անշէջ:

Իսկ միւսն յիշում է շատ ճոխ ապարանքն,
Հանգիստ ու խաղաղ իր անցեալ վառ կեանքն.
Վերջին այդ ժամերն շատ ծանր էր թւում.
Երբեւն իրարից չէին բաժանուում:

Ա Ր Տ Ա Ս Ո Ի Ք

(Գերմ.—Max, Feist-ի)

Այն արտասուքն, թուխ այտերէն, որ կը վագեն,
Անկարող եմ ցամաքեցնել քո աչերէն.
Թող ես ծծեմ արտասուքի սուրբ կաթիլներն,
Գէթ զովանան վտղուց պապակ իմ շրթունքներն:

Այդ կաթիլներն սրտի խորքիցն են դուրս բղխում,
Նրանք մաքուր սիրոյ նշան արտայայտում.
Թոյլ տուր խմեմ այդ կաթիլներն կեանք ներշնչող,
Բուժել կուզեմ ծանր դարբից սիրոս ճնշող:

Մի խօսք ասելու էինք անկարող
Կային աղանջներ չորս կողմ միշտ լսող.
Աչքով ու ունքով միայն հասկացայ,
Թէ ինչ է ուզում՝ ասել ինձ ախ նա.
Մտեցայ կամայ էն խիտ անտառի,
Ուր կանգնած էր նա մօտ կաղնու ծառի:

Ոչ որ մեր երկսին այնտեղ չէր տեսնում.
Միայն չորս կողմ՝ օ ձայներ էր լսում.
Խորքն անտառի, մէջ էն ձայներին,
Լսում շատ հեռուց մութճի ձայնն ոյժգին.
Կարծես թէ մէկն իւր բախան էր փնտռում,
Բայց հեշտ չէր գտնել այդ բախտն մեզանում:

Մարդիկ մինչ անգամ պատմել չին կարող,
Ինչպէս մենք իրար էինք միշտ սիրող,
Մեր այդ վայելքին չկար չափ սահման,
Մեզ կեանքն էր ժպտում, կեանքն անսահման.
Մէկ տեղ միտսին այդ թանկ ժամերում,
Լոյսն էլ անողորմ արգելք էր լինում:

Մեր այդ վառ կեանքի բախտն ժպտացող,
Անշուշտ շատերն են սրտանց ցանկացող,
Պէտք է աշխատել նրան չկորցնել,
Իժար է դժար նորէն ձեռք բերել.
Մենք լուս միտսին ապրում երջանիկ,
Քաղցր այդ ժամեր վարած գեղեցիկ:

էն խուլ անտառում ավտոս լոյսն վաղ
Մթին վարագոյրն ցրեց անյապաղ,
Բախտն մեր չքնաղ լոյսի հետ արագ,
Գնաց շատ հեռուն, թողեց մեզ մենակ.
Ոյժս թէ պատէր չէի ես թողնել,
Քաղցր այդ ժամերն, հեռուն շուտ անցնել:

Ա Ղ Բ Ի Ի Բ Ի Ե Ջ Բ Ի Ն

(Գերմ. — Schiller-ի)

Աղբիւրի եզրին՝ ջահէլ պատանին,
Պսակներ կազմում թարմ ծաղկանց միջին.
Ալիքներն ջրի իրար են խփում,
Պատանու սիրան վեր ու վար անում:

Աղբիւրի հոսող ջրի էն նման,
Կարծես թէ վազում անցնում օրն էլ այնչ,
Այդ օրն յանկարծ ծաղիկ պատանին,
Գունատեց՝ նման թոռմած վարդ թփին.

Գէթ չկամ մէկն, որ հարց տար նորան.
Այդ ծաղկանց միջում օրերն անմաման,
Ամենքն ուրախ իրար հարազատ,
Բայց մի նա տխուր ապրում միշտ անջատ:

Ծաղկունքն այդ թարմ՝ անմեղ պատանու,
Ջարթեցնում իսկոյն ցաւերն վառ հոգու,
Անցեալ թարմ յուշերն նորէն կրկնում,
Այդ բոլորն իզճեր, իզճեր են թում:

Աշխարհի ոչ փառքն և ոչ էլ փողը,
Մտքերին նրան տիրող, իշխողը.
Մէկն է լոկ միայն, իրին որ մտիկ,
Հեռուն է փախչում, նրանից անբախտիկ:

Պատկերն ան շքեղ՝ որպէս մի շաք,
Ամեն մի բոպէ տեսնում մեն մենակ,
Բազուկով շատ թոյլ գրկել է ուզում,
Դէպի էն հեռուն, փախչում է, փախչում:

Ազրիւրի եզրին, այդ ծաղկանց միջում,
Սիրելի էն մէկից միայն նա ուզում.
Խրճիթն էլ ցածր իրեն կը բաւէ,
Լոկ իր սիրունին միայն թէ սիրէ:

ՕՐԻՈՐԴԻ ԱՐԿԱԾՆԵՐԻՑ

(Գերմ. — Schiller-ի)

Երկինքն էն ջինջ՝ սև մութ ամպեր կուտակւած,
Կաղնիների Փշոցն աշխարհ էր պատած,
Մի գեղ աղջիկ նստած հզրին լճակի,
Հառաչում էր դալուկ աչիրն ջրալի:

Երեկոյ էր. արդէն արևն մայր մտել.
Տխուր տրտում յուսոյ ճամբան էր բռնել.
Նա էր կանչում միակ իւր սուրբ իղէալին,
Բայց ան իզուր, փնտռում էր նա անցեալին:

Գնաց անհետ. անցեալն նորէն չի գալու,
Թէկուզ արցունք ուղէր ընդմիշտ թափելու.
Նա խիստ սիրում ու միշտ պաշտում էն մէկին,
Որ իր սրտին էր շատ մօտիկ թանկագին:

ՆԵՐՔԻՆ ԿՈՒԻԻ (Գերմ. — Schiller-ի)

Ներքին կրակն վառ դգացմանս բոցավառ,
Անկարող եմ հանգեցնելու այն խաղառ.
Մինչ իսկ էյ դուն՝ անբիժ հրեշտակ իմ հոգու,
Լափող բոցերն անկարող ես մարելու:

Երդւում, ուխտում ներքին կրակն իմ դգացմանս,
Անգոր կամքովս խաղառ մարել անպայման.
Անա պսակն քո էն ձեռքոջն նւիրած,
Յետ եմ տալիս, վերցրու նրան իմ պաշտած:

Կոտրենք այն դաշն, որ մենք երկսով կապեցինք,
Է՛յ ինձ սիրող... պսակն կորած համարենք.
Նա է անմահ, ով հանձարով է մեռած.
Այդպէս հեշտ չէ, ան այդ բոլորն մոռացւած:

Տես թէ ինչպէս ներս'ս ճիճուն խիստ կրծում,
Եւ ես անգոր ամբողջ մարմնովս թառամում,
Մի զարմացիր թէ ուզում եմ քեզ մերժել.
Տնւր ինձ ձեռք'դ բաւ է ինչքան ես տանջել:

Չեմ հաւատում այն բնրձր հոգուն՝ իղէալին,
Բայց չեմ կարող... իմ թնր մտքերս հզոր են,
Եկ, եկ զիրկս, ով իմ սրտի լուկ պաշտած,
Չկայ բարձր քան իմ գրկում փարեկուց:

Ես ուղեցի փախչել հեռուն, այդ կեանքից,
Տերանական բախտին հըլու մեղսակից,
Բայց չեմ կարող ներքին կայծերն իմ մարել,
Վարջին ժամերն կուզեմ սիրտս ան խաղառ:

Տեոնի Է ՀՈԳԻՍ (Անգլ.—Lord Byron-ի)

Տեսեր է հողիս... և թող իմ առաջիս,
Թոյլ թեկերն հնչին քո նստրը մատներն,
Մեղնու ան քաղցր ձայնն ականջիս,
Թրթրոտն նրբին էն մեզմ օրհներգներն:
Սրտես մէջ սիրոյ յոյսի շողերն,
Այդ ձայնից իսկոյն նոր ոյժ կըստանան,
Աշխիս հոտոյ խիստ յորդ արցմներն,
Կը դազրէ մարդ մտքիս ցուն գոծան:

Թող ոյժդին, և թոյլ հնչէ մեղեդին,
Նախ երգերն էն քո ուրախ յուշերի,
Ապա ոչ երգիչ պիտի լամ ուժդին,
Եթէ չէ իսկոյն սիրտս կը պայթի
Յուշերով տխուր միշտ նա է սնւած,
Տանջանքի բովում երկար ծրփալով,
Գիտցիր գուն այժմ ինչեր է արւած,
Կտրիք էն թեկերն... ամիր կամ սիրով:

Մի կՏՈՐ ՖԱԼԻԵՐՕ-ԻՅ (Անգլ.—Lord Byron-ի)

Նորահաս կեանքի օրերն էն սիրուն,
Նման է վառուղ գիւրին յարդ ցողուն,
Չափահաս մարդու օրերն անցկացրած,
Երկաթի նման է կրակում շիկացած:
Երիտասարդ կեանքն է շուտով ըմբռնում,
Ըմբռնած միտքն էլ իսկոյն մոռանում,
Իսկ մեծ մարդն անշուշտ շատ ուշ հասկանում,
Հասկացածն երբէք չի էլ մոռանում:

ԻՄ ՆԵՏԸ ԵՒ ԵՐԳԸ

(Անգլ.—Henry Longfellow-ի)

Նեանցի վերն նեան իմ ուղիդ,
Չ'գիտցայ թէ ձեր ընկաւ նա անհետ,
Անցան որ արագ նեանց նա մի տեղ,
Հեաքն անգամ չկար տեսած օգի հետ:

Երգեցի մի երգ ազատ օգունն այն,
Բայց թէ ձեր անցաւ ոչինչ չիմացայ,
Խոր միտք, սուր նայւածք կարող էր լոկ այն
Տեսնել որ անցաւ, կորաւ անզգայ:

Նայելով երկար կողմու մէկ ճղին,
Գտայ ես նեոս առանց Չարդւածի,
Իսկ երգած երգս մինչ տողերն վերջին,
Գտայ ես սրտումն իմ մի մտերմի:

ԿԱՄԲ (Անգլ.—Alfred Tennyson-ի)

Ոյժեղ է նա ով կամք ունէ,
Ծանր կեանքում մրցել գիտէ,
Ոյժեղ կեանքին աշխարհն ովկեան,
Անկարող է խախտել անգամ:

Որպէս մեծ ժայռ տեղն կանգուն,
Ծով ալիքին յուժ գիմացկուն,
Կամ թէ ծովի յորձանքն ուժդին,
Իշխել ուզում ծովն անազին:

Բայց վնջ նորան ով կամք չունի,
չլու է խիստ եղեռն կեանքի.
Թւում է միշտ թէ նա ապրում.
Իզճւր այդպէս կեանքին նայում:

Լաւ սկզբունքն՝ առանց կամքի,
Անհիմն ճամբայ ուղիղ կեանքի.
Կորած է նա ով էլ լինի,
Եթէ տէր չէ հօր կամքի:

ՄԱԻԴ-ից (Անգլ. — Alfred Pennyson-ի)

Թող չը ծածկէ՛ դեռ հողն ինձի,
Նախ այս կեանքի համը տեսնեմ.
Ապա յետոյ ինչ էլ լինի,
Է՛ն կեանքից յետ էլ հոգ չունեմ:

Սե, մութ խաւարն վերին սահուն,
Թող չը պատէ դեռ ինձ վրայ,
Մինչ ես գիտնամ կեանքումն սիրուն,
Սիրում է ինձ՝ Է՛ն մէկն որ կայ:

Իսկ յետ այնու թող ինձ պատեն,
Ինչ սե օրեր կուզեն կեանքից,
Ես իմ օրերն տեսած արգէն,
Ինձ կը բաւէ այդ էլ կեանքից:



Թ. Ա.

№ 5439

ԳԻՆՆ Է 8 ԲՈՒԲ.

